**Համաձայնագիր-1**
**14.12.2021թ. կնքված N ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/32 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին**

ք. Երևան «02» փետրվարի 2022թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի մի կողմից, և «Էքսպերտ Դիալոգ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս Ընկերության տնօրեն՝ Տ. Սահակյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 14.12.2021թ. կնքված N ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/32 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

**Կողմերը որոշեցին՝**

1.1. Պայմանագրի 7.13 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի /կցվում է/:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը և կից հավելվածը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պետական եկամուտների կոմիտե | «Էքսպերտ Դիալոգ» ՍՊԸ |
| ք.Երևան, Մ. Խորենացի 3,7 | ք. Էջմիածին, Սբ. Մաշտոցի 0 |
| ՀՎՀՀ 02647057 | ՀՎՀՀ 04727363 |
| Հ/Հ 900011054013 | Հ/Հ 11809020323300 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի | «ԱյԴի Բանկ» ՓԲԸ |
| գործառնական վարչություն | Տնօրեն |
| Գլխավոր քարտուղար | |
| Է. Գևորգյան ____________ | Տ. Սահակյան ____________ |
| /ստորագրություն/ Կ.Տ/ | /ստորագրություն/ Կ.Տ/ |

